ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«--------» ---------- 2024թ. **N --- -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 49-րդ հոդվածով, 67-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի հ. 69-Ա որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների 2023 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևան քաղաքի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման հավելվածում նշված կազմակերպությունների կողմից շահութաբաժինների վճարումները Երևան քաղաքի բյուջե կատարվում են եռամսյա ժամկետում (ամսական հավասար չափերով), բայց ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի հոկտեմբերի 1-ը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2024 թվականի հունիսի ___-ի
N_____-Ա որոշման

Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների՝ 2023 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևան քաղաքի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը

հազ.դրամ

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	2023 թվականի տարեկան զուտ շահույթ	Շահութաբաժնի հաշվարկման բազա (ըստ առաջարկությունների)	Համայնքի մասնակցության շահութաբաժին	Պահուստային կապիտալ	Միասնական բազմանպատակային հիմնադրամ	Վնասների նվազեցում
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*
1	«Երևան բժշկագիտական կենտրոն» ՓԲԸ	35,200.9	63,085.9	25,234.4		9,966.5	
2	«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ	233,316.0	237,742.0	95,097.0		138,219.0	
3	«Շտապբուժօգնություն» ՓԲԸ	7,689.0	35,299.0	14,119.6			
4	Երևանի Արաբկիր» ԱԿ ՓԲԸ	-12,295.2	260.7	104.3			
5	«Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ	21,682.6	21,716.6	0.0	58.5		21,624.1
6	Երևանի «Բաղրամյան» ԱԿ ՓԲԸ	-2,834.0	4,309.0	1,723.6			
7	Երևանի «Բագրատունյաց» ԱԿ ՓԲԸ	8,257.0	8,257.0	3,302.8		4,954.2	
8	Երևանի «Քանաքեռ-Զեյթուն» ԱԿ ՓԲԸ	2,567.0	2,610.0	1,044.0		1,523.0	
9	Երևանի «Տիգրան Մեծ» ԱԿ ՓԲԸ	12,639.0	19,433.0	7,773.2		4,865.8	
10	Երևանի «Նոր Նորք» ԱԿ ՓԲԸ	11,573.0	11,573.0	4,629.2	4,000.0	2,943.8	
11	«Կարմիր Բլուր» պոլիկլինիկա ՓԲԸ	3,730.0	3,730.0	1,492.0		2,238.0	
12	«Երևանի «Մալաթիա-Սեբաստիա» ԱԿ ՓԲԸ	-8.0	48.0	19.2			
13	«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ	444.0	444.0	177.6			266.4
14	«Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ	14,979.0	14,979.0	5,991.6		8,987.4	
15	«Երևաննախագիծ» ՓԲԸ	5,963.3	6,623.3	2,649.3			3,314.0
16	«Ջրային կառույցների» ՓԲԸ	33,035.8	33,036.6	13,214.6		1,181.1	18,640.0
17	«Երքաղլույս» ՓԲԸ	48,213.0	48,213.0	19,285.2		28,927.8	
18	«Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ	47,480.0	47,740.2	19,096.1		28,383.9	
19	«Հայ-Արտ» Մշակութային կենտրոն ՓԲԸ	1,761.4	1,768.7	707.5		1,053.9	
20	«Երևանի Հմայակ Խաչատրյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՓԲԸ	576.3	576.3	230.5		345.8	
21	«Աջափնյակ-վերելակ» ՓԲԸ	242.3	242.3	96.9		145.4	
22	«Անխափան վերելակ» ՓԲԸ	5.0	5.0	2.0		3.0	
	ԸՆԴԱՄԵՆԸ	**474,217.4**	**561,692.6**	**215,990.6**	**4,058.5**	**233,738.6**	**43,844.5**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու՝ «Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2023 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևան քաղաքի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը հաստատելու մասին» որոշման ընդունումը պայմանավորված է Երևան քաղաքի ավագանու՝ 2010 թվականի մարտի 18-ի հ.69-Ա որոշման (խմբագրված՝ Երևան քաղաքի ավագանու 23.12.2020թ. հ.312-Ա որոշմամբ) կատարմամբ (այսուհետ՝ Որոշում):

Համայնքի սեփականություն հանդիսացող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող ընկերությունների՝ 2023 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման համար հիմք են հանդիսացել կազմակերպությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև՝ Երևան քաղաքի բյուջե վճարվելիք տարեկան շահութաբաժնի հաշվարկման բազաները և վճարման չափի առաջարկության մասին տեղեկանքները, զուտ շահույթի բաշխման ուղղությունների վերաբերյալ կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունները:

Համայնքի սեփականություն հանդիսացող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող և գործունեություն ծավալած 37 ընկերություններից 2023 թվականի տարեկան տնտեսական գործունեության արդյունքներով շահույթով են աշխատել 21 ընկերություն (որից 2 ընկերություն հանձնված է հավատարմագրային կառավարման), որոնց զուտ շահույթը կազմել է 607,841.6. հազ. դրամ, իսկ առանց հավատարմագրային կառավարման հանձնված ընկերությունների՝ 489,354.6 հազ. դրամ:

Շահութաբաժին վճարող հանդիսացող ընկերությունները նույնպես թվով 21-ն են՝ «Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի գծով շահութաբաժին չի հաշվարկվում, որովհետև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 114-րդ հոդվածի 3-րդ մասի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի դ) կետի հիմքով առկա են շահութաբաժնի վճարման սահմանափակումներ (զուտ ակտիվների արժեքը պակաս է կամ կպակասի կանոնադրական կապիտալից շահութաբաժինների վճարման հետևանքով):

Արդյունքում, հաշվի առնելով Որոշման և ՀՀ օրենսդրության դրույթները՝ 2023 թվականի արդյունքներով Երևան քաղաքի բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի գումարը կկազմի 215,990.6 հազ. դրամ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ